ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ

ԹՈՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ
Սևանի զբոսաշրջության գրասենյակի պատասխանատու,
ԳՊՀ դասախոս
e-mail: david_levonich@mail.ru

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության բարելավումն ու վիճակագրական ստույգ տվյալների վրա հիմնվող բարձրորակ հետազոտություններն ու վերլուծությունները դարձել են պետական քաղաքականության հիմնական խնդիրները: Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը վարվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից: 2015 թվականից սկսած՝ լայն զբոսաշրջային վիճակագրություն է վարվում նաև Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի կողմից, ինչի արդյունքում ամեն տարի վեր են հանվում զբոսաշրջությանը վերաբերող խնդիրներ:

Հոդվածում ցույց է տրվում նաև Սևանի թերակղզու տարածքում զբոսաշրջային ակտիվ հոսքերի աճող տենդենցն ու իր թողած դրական ազդեցությունը:

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջային վիճակագրություն, զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակ:*

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքի՝ զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը վարվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից: Թե՛ ներգնա, թե՛ արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսանում սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված, Հայաստանի Հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Թերևս մինչ այժմ զբոսաշրջության վիճակագրության մեջ արձանագրելով անբավարար ճշգրտություն՝ ՀՀ Կառավարության՝ 2019 թվականի ապրիլի 12-ի N 14 արձանագրային որոշման հիման վրա հավանություն է տրվել ՀՀ սահմանային անցակետերում առավել ճշգրիտ համակարգի ներդրման միջոցառումներին, որի արդյունքում կունենանք ամբողջական տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի,

սեռի, տարիքի, քաղաքացիության, այցի տևողության, կրկնվող այցելությունների քանակի, սահմանային անցման կետերի վերաբերյալ:

Այս ամենին զուգահեռ, դեռևս 2015 թվականից վիճակագրություն է վարվում նաև Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի կողմից:

Հոդվածում կփորձենք համադրության կարգով ցույց տալ երկու կառույցներից ստացված վերջին տարիների վիճակագրական տվյալները:

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) տվյալների՝ 2019 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը 2018 թվականի համեմատ աճել է 4 տոկոսով՝ հասնելով գրեթե մեկ ու կես միլիարդի:

Նույն ժամանակահատվածի համար, ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալների, Հայաստանի Հանրապետությունում աճը կազմել է 14,7 տոկոս:

Դիտարկելով արդեն Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի վիճակագրական տվյալները՝ 2018 և 2019 թվականների համադրությամբ՝ Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների թվի աճը կազմել է 17.27 տոկոս:

Ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալների՝ ներկայացնում ենք վերջին հինգ տարիներին Հայաստանի Հանրապետություն այցելած զբոսաշրջիկների տվյալներն աղյուսակի տեսքով.[1]

Աղյուսակ 1.

2015	2016	2017	2018	2019
1,192,119	**1,259,657**	**1,495,779**	**1,651,782**	**1,894,377**

Երկրորդ աղյուսակում ներկայացվում են Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների տվյալները:[2]

Աղյուսակ2.

2015	2016	2017	2018	2019
21,527	**32,878**	**83,044**	**131,229**	**158,612**

Ըստ երկու աղյուսակների տվյալների՝ ներկայացնում ենք, թե Հայաստանի Հանրապետություն ժամանած զբոսաշրջիկների քանի տոկոսն է այցելել Սևանի թերակղզի, այսպես՝ 2015 թվականին ընդհանուր ժամանածների 1,80 տոկոսը, 2016 թվականին՝ 2,61 տոկոսը, 2017 թվականին՝ 5,55 տոկոսը, 2018 թվականին՝ 7,94 տո-

[1]ՀՀ Վիճակագրության կոմիտեի տվյալները վերջին տարիների ընթացքում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ:

[2]Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2015, 2016, 2017, 2018, 2019 թվականների տարեկան հաշվետվություն:

կոսը և արդեն 2019 թվականին՝ 8,37 տոկոսը: Տոկոսներն իհարկե ավելի բարձր կլինեին, եթե Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակը կարողանար գործունեություն ծավալել տարեկան և ոչ թե սեզոնային կտրվածքով: Չնայած սեզոնայնությանն ու ըստ դրա ստացված տվյալներին՝ այնուամենայնիվ ակնհայտ է, որ Սևանի թերակղզին տարեցտարի ավելի գրավիչ է դառնում զբոսաշրջիկների համար՝ հաշվեկշռում ունենալով թերևս չլուծված և շուտափույթ լուծումներ պահանջող բազմաթիվ զբոսաշրջային խնդիրներ:

Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակում վերջին հինգ տարիների ընթացքում հավաքվում և խմբագրվում են զբոսաշրջիկների կողմից ներկայացվող խնդիրներ, ընդ որում կան ինչպես նոր, այնպես էլ կրկնվող խնդիրներ: Առանձնացնենք կարևոր և կրկնվող խնդիրներից երկուսը:[1]

1) Սևանի ափին նկատելիորեն պակաս են հյուրանոցներն ու հյուրանոցային համալիրները, իսկ առաջարկվող տնակային տնտեսությունները կա՛մ բավականին հին են, կա՛մ էլ բավականին թանկ այդ ձևաչափով հյուրընկալություն կազմակերպելու համար:

Բացատրություն-մեկնաբանություն: Եթե առաջիկա տարիներին հյուրընկալությունը շարունակվի նույն օբյեկտներում, նույն գներով և նույն սերվիսով, ապա անշուշտ կորցնելու եք և՛ հին, և՛ ենթադրյալ նոր հաճախորդներին:

Խորհուրդ և առաջարկություն: Դրական ազդեցություն կթողնի Սևանա լճի ակտիվ զբոսաշրջային գոտում 4 և 5 աստղանի մեկական, 2 և 3 աստղանի չորս կամ հինգ հյուրանոցների կառուցումը:

Տնակային տնտեսություններն էլ պետք է իրենց հերթին արդիականացնեն իրենց տնակները՝ համապատասխանեցնելով ժամանակակից չափորոշիչներին:

Այսպիսով՝ Սևանում հնարավոր կլինի հյուրընկալել ֆինանսական ցանկացած հնարավորություն ունեցող զբոսաշրջիկի: Նշենք նաև, որ այս խնդիրն ունի ամենամյա կրկնվող բնույթ, և միայն 2019 թվականի զբոսաշրջային սեզոնի ընթացքում գրասենյակում հավաքագրվել է շուրջ 1581 անգամ: Եթե արտահայտենք տոկոսային համադրությամբ, կստացվի, որ 2019 թվականի զբոսաշրջային սեզոնի ընթացքում գրասենյակ է դիմել 4044 զբոսաշրջիկ, և դիմածների 39,09 տոկոսը հարկ է համարել բարձրաձայնել տվյալ խնդրի շուրջ:

Անդրադառնանք երկրորդ կարևոր և դարձյալ կրկնվող խնդրին:

2) Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետությունն օտարազգի զբոսաշրջիկների համար հայտնի է առավելապես պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, և երբ Հայաստանի տարածքում զբոսաշրջիկները հրաժարվում են օգտվել

[1]Տե՛ս նույնը:

զբոսաշրջային վճարովի տարբեր ծառայություններ մատուցող տուր-օպերատորներից, բաց է մնում եկեղեցիների մասին տեղեկատվական բուկլետների առկայությունն իրենց հասանելի լեզուներով: Այլընտրանք է համացանցում եղած տեղեկատվությունը, որն իհարկե շատ դեպքերում ճշգրիտ չէ, երբեմն էլ՝ նույնիսկ իրարամերժ: Հետևաբար հնչում են զբոսաշրջիկների տեղին գանգատները, որոնք էլ որոշ բացասական երանգներով հետագայում վերաձևակերպվում են որպես թերություն, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև որպես կեղծ գովազդ երկրի մասին: 2019 թվականի ընթացքում տվյալ խնդրի մասին բարձրաձայնել է զբոսաշրջիկների 41,71 տոկոսը:

2018 և 2019 թվականներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների տվյալներն ըստ երկրների[1]
Ընտրված է աղյուսակի սկզբնական 30 երկրների ցանկը

Աղյուսակ3.

Հ/Հ	Ե Ր Կ Ի Ր Ը	2018 թվականին	2019 թվականին
1.	ՌՈՒՍԱՍՏԱՆ	684,013	855,612
2.	ՎՐԱՍՏԱՆ	314,341	344,607
3.	ԻՐԱՆ	160,645	160,676
4.	ԱՄՆ	53,744	63,175
5.	ՂԱԶԱԽՍՏԱՆ	12,981	39,882
6.	ԳԵՐՄԱՆԻԱ	28,655	39,690
7.	ՀՆԴԿԱՍՏԱՆ	31,213	38,735
8.	ՈՒԿՐԱԻՆԱ	32,412	36,125
9.	ՖՐԱՆՍԻԱ	27,651	32,397
10.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ	20,363	20,262
11.	ԼԵՀԱՍՏԱՆ	15,397	17,134
12.	ՉԻՆԱՍՏԱՆ	9189	15,550
13.	ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ	11,898	14,430
14.	ԻՏԱԼԻԱ	10,802	12,581
15.	ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ	10,873	12,515
16.	ԼԻԲԱՆԱՆ	11,491	12,244
17.	ՏԱՋԻԿՍՏԱՆ	10,649	11,747
18.	ԱՄԷ	11,901	11,028
19.	ԲԵԼԳԻԱ	8223	10,181
20.	ԲԵԼԱՌՈՒՍ	8656	10,104
21.	ՈՒԶԲԵԿՍՏԱՆ	5228	9630

[1]ՀՀ Վիճակագրության կոմիտեի տվյալները 2018 և 2019 թվականների ընթացքում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ:

22.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ	6947	8970
23.	ԻՍՊԱՆԻԱ	6922	8259
24.	ԿԱՆԱԴԱ	6468	7314
25.	ԻՍՐԱՅԵԼ	6319	7072
26.	ՇՎԵԴԻԱ	4782	6740
27.	ԱՎՍՏՐԻԱ	5202	5865
28.	ԱՎՍՏՐԱԼԻԱ	4263	5717
29.	ԻՐԱՔ	5106	5602
30.	ՇՎԵՅՑԱՐԻԱ	4782	5561

Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների վիճակագրությունն ըստ պետությունների և վերջին 5 տարիների աճի տատանումների[1]

Ընտրված է աղյուսակի սկզբնական 30 երկրների ցանկը

Աղյուսակ4

N	ԵՐԿԻՐԸ	2015	2016	2017	2018	2019
1.	ԳԵՐՄԱՆԻԱ	496	1003	2749	8216	16.808
2.	ՖՐԱՆՍԻԱ	2217	3127	5637	10.989	15.497
3.	ԼԵՀԱՍՏԱՆ	2216	3944	7387	11.075	12.950
4.	ՌՈՒՍԱՍՏԱՆ	1473	1108	4307	7520	12.829
5.	ԻՏԱԼԻԱ	482	1202	4019	7164	10.761
6.	ՉԻՆԱՍՏԱՆ	259	416	1768	4730	8142
7.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ	-	90	347	1291	4875
8.	ԱՄՆ	78	704	3088	5949	4228
9.	ԻՐԱՆ	5803	7081	16.156	1823	3759
10.	ԻՍՊԱՆԻԱ	57	435	1685	3356	3749
11.	ԱՎՍՏՐԱԼԻԱ	33	138	609	2680	3253
12.	ԿԱՆԱԴԱ	208	182	724	2973	2964
13.	ԲԵԼԳԻԱ	45	934	1989	4187	2606
14.	ՀՆԴԿԱՍՏԱՆ	72	291	1957	3624	2555
15.	ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ	82	112	501	2469	1866
16.	ՉԵԽԻԱ	97	1019	2954	3558	1799
17.	ԱՄԷ	-	-	-	964	1527
18.	ՇՎԵՅՑԱՐԻԱ	35	356	502	2077	1303
19.	ՃԱՊՈՆԻԱ	22	379	520	1724	1149
20.	ԼԻԲԱՆԱՆ	-	-	908	3092	1037

[1]Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի՝ 2015, 2016, 2017, 2018, 2019 թվականների տարեկան հաշվետվություն:

21.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ	-	-	1434	1225	935
22.	ԴԱՆԻԱ	-	182	219	638	648
23.	ԱՐԳԵՆՏԻՆԱ	28	200	389	968	529
24.	ՎՐԱՍՏԱՆ (վրացիներ)	150	204	526	1268	481
25.	ՖԻՆԼԱՆԴԻԱ	-	69	168	536	472
26.	ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	82	67	135	755	457
27.	ԹՈՒՐՔԻԱ (հայեր)	-	-	727	958	437
28.	ՀՈԼԱՆԴԻԱ	-	-	62	404	424
29.	ԻՍՐԱՅԵԼ	87	81	70	260	374
30.	ԻՐԱՔ	-	-	863	459	372

Ըստ աղյուսակ 3-ի տվյալների՝ 2019 թվականին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ աճ ապահոված առաջին հինգ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Իրանը, Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Ղազախստանը: Իսկ արդեն ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ աճ ապահոված առաջին հինգ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Ռուսաստանն ու Իտալիան: Ինչպես երևում է, տարբերությունն ակնհայտ է երկրների հերթականության շարքում, ինչն իհարկե տրամաբանական է՝ հաշվի առնելով զբոսաշրջիկների պատկերացումները տեղանքի, զբոսաշրջության տեսակների, ժամկետների, ըստ հետաքրքրության առաջնային վայրերի և այլ հանգամանքներով պայմանավորված առանձնահատկությունների:

Համեմատենք նաև 2018 և 2019 թթ. ընթացքում նվազում ապահոված երկրների ցանկը: Ըստ աղյուսակ 3-ի՝ դրանք Ֆիլիպիններն ու Արաբական Միացյալ Էմիրությունն են, իսկ ըստ աղյուսակ 4-ի՝ ԱՄՆ-ն, Կանադան, Բելգիան, Հնդկաստանը, Նոր Զելանդիան, Չեխիան, Շվեյցարիան, Ճապոնիան, Լիբանանը, Ֆիլիպինները, Արգենտինան, Վրաստանը, Ֆինլանդիան, Պորտուգալիան, Թուրքիան ու Իրաքը:

Բարձրաձայնման է ենթակա նաև կտրուկ աճ ապահոված երկրների ցանկն ըստ աղյուսակ 3-ի՝ Ղազախստան, Չինաստան, Ռուսաստան, Ուզբեկստան, Գերմանիա, իսկ աղյուսակ 4-ի տվյալներով՝ Գերմանիա, Ֆրանիսիա, Ռուսաստան, Չինաստան, Հարավային Կորեա, Իրան, ԱՄԷ: Թերևս սա միակ համեմատական չափանիշն է, որտեղ քիչ թե շատ նմանություն կա երկու աղյուսակների միջև:

Նկատենք, որ, ըստ աղյուսակ 3-ի տվյալների՝ Ղազախստանն ու Ուզբեկստանը բացարձակ աճի տեմպին հասել են ոչ թե նրա համար, որ Հայաստանի Հանրապետությունը ճիշտ ու թիրախավորված զբոսաշրջային քաղաքականություն է վարում տվյալ երկրներում, այլ նպաստել է ԵՏՄ ընդհանուր սահմանների առկայության պարագայում 2019 թվականի ընթացքում այլ երկրներից ավելի էժան ավտոմեքենաներ ՀՀ ներկրման հանգամանքը, և գրեթե անբեկանելի է այն փաստը, որ 2020 թվա-

կանին Հայաստանին տրված նման արտոնությունը դադարեցնելուց հետո այդ երկրներից սպասելի է լինելու նաև կտրուկ նվազում: Միևնույն ժամանակ նկատենք, որ ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ վերջին հինգ տարիների ընթացքում Ղազախստանից և Ուզբեկստանից զբոսաշրջային հոսքն այնքան փոքր ու չնչին է եղել, որ այցելությունների մասով տեղ չեն գտել նույնիսկ 30 երկրների ցանկում: Այնուամենայնիվ, ՀՀ-ն՝ որպես իրական զբոսաշրջային գրավչություն ներկայացնող երկիր, հետաքրքրում է աշխարհի շատ երկրների զբոսաշրջիկներին, ովքեր տարեցտարի ընդլայնում են իրենց զբոսաշրջային ներգրավվածությունը ՀՀ-ում՝ ՀՆԱ-ի վրա թողնելով միայն դրական ազդեցություն: Կարող ենք փաստել, որ Սևանի համար վերջին հինգ տարիների ընթացքում զբոսաշրջային լուրջ դոնոր երկրներ են դարձել Ֆրանսիան, Գերմանիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Իտալիան, ԱՄՆ-ն ու Իրանը: Սևանի նկատմամբ օրեցոր աճում են նաև Չինաստանի ու Հարավային Կորեայի զբոսաշրջային հետաքրքրությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին որոշակի երկրների կողմից Հայաստանի նկատմամբ ձևավորվել է աշխույժ զբոսաշրջային հետաքրքրություն, սակայն նույնիսկ աղյուսակի առաջին հորիզոնականներն զբաղեցնող երկրներում պետության մակարդակով դեռևս շատ անելիքներ կան: Անհրաժեշտ է պետական քաղաքականության իրականացման շրջանակներում արտաքին գործերի նախարարության, սփյուռքի հանձնակատարի, այդ երկրների սփյուռքի միջոցով աղյուսակներում ոչ ակտիվ զբոսաշրջային հոսքեր ապահովող երկրներում ընդլայնելու Հայաստանի Հանրապետության և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը միտված միջոցառումները: Իսկ արդեն մեծ հոսքեր ապահովող երկրներում պետք է կատարել թիրախավորված մարքեթինգային քաղաքականություն՝ ըստ այդ երկրների զբոսաշրջիկների ցուցաբերած հետաքրքրությունների շրջանակի: Այս քայլերն այսօր կարևոր են մեր երկրի սահուն զարգացման ընթացքն ապահովելու համար, քանի որ միտված են ազգային եկամտի մեծացմանը, ինչից հետո հնարավոր կդառնա համաչափ զարգացման ապահովումը ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև այն տարածքներում, որոնք դեռևս նոր են որդեգրել զբոսաշրջային ուղղությունների հնարավորություններից համայնքին հավելյալ օժանդակության ցուցաբերումը և որոշ չափով պետության հոգսի թեթևացումը: Հարկ ենք համարում նշել նաև, որ այս ամենի արդյունքում կբացվեն նորանոր աշխատատեղեր, արդյունքում կբարձրանա բնակչության կենսամակարդակը, և այս ամենը կարող է կենսունակ դառնալ միայն պետական օրգանիզմի շղթայական կենսագործունեության արդյունքում:

Օգտագործված գրականություն

1. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք, Երևան, 10.12.2003:

2. Հայաստան միջազգային այցելուների հետազոտության 2007թ. հաշվետվություն, USAID:

3. ՀՀ ԱՎԾ տեղեկագրքեր, http://www.armstat.am:

4. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք, http://www.mineconomy.am:

5. Պողոսյան Շ., Զբոսաշրջային շուկայի վերլուծությունը ՀՀ-ում, Հյուսիսային համալսարանի գիտաժողովի նյութեր, Երևան, 2015:

6. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ. տարեկան հաշվետվություններ:

7. Гуляев. В. Г., Туризм: экономика и социальное развитие 2003:

CURRENT TRENDS IN TOURISM DEVELOPMENT IN ARMENIA BY THE EXAMPLE OF PENINSULA OF SEVAN

TOROSYAN DAVIT
Manager of the Tourism Center of Sevan,
GSU Lecturer

Improving tourism statistics in the Republic of Armenia and high-quality research and analysis based on accurate statistics have become major issues of state policy. The official statistics on tourism in the Republic of Armenia are kept by the RA Statistical Committee. In addition to this structure, a wide range of tourism statistics has been maintained since 2015 by the Sevan Mobile Information center, as a result of which issues related to tourism are raised every year. The article also shows the growing trend of active tourist flows in the Sevan's peninsula and its positive impact.

Keywords: *tourism, tourist, tourism statistics, tourist information center.*

АКТУАЛЬНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ НА ПРИМЕРЕ СЕВАНСКОГО ПОЛУОСТРОВА

ТОРОСЯН ДАВИД
РуководительТуристического Центра г. Севан,
Преподаватель ГГУ

Улучшение статистики туризма в Республике Армения, высококачественные исследования и анализ, основанные на точные статистические данные, стали главными вопросами государственной политики. Официальная статистика по туризму в Республике Армения ведется статистическим комитетом РА. В дополнение к этой структуре, с 2015 года Севанское мобильное информационное бюро ведет широкий спектр туристической статистики, в результате чего вопросы, связанные с туризмом, поднимаются каждый год. В статье также показана тенденция роста активных туристических потоков на Севанский полуостров и ее положительное влияние.

Ключевые слова*: туризм, туристы, туристическая статистика, туристический информационный центр.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2020թ.: